# Հայկական լուրեր

## ԶԱՐԻՆ

### ԵՒ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԻՋԵՒ

Հայկական կրկնակ մեծ յոբելեան-ներու առթիւ Վեհ. Կաթողիկոսը հեռագիրը ուղղած է Ռուսիոյ Զարին.—

Էջմիածին, 13 Հոկտ.

Լիվադիա, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին.

Հայաստանում քրիստոնէական լուսաւորութեան հիմունքը դնող յաւերժայիշատակ Ս. Մեսրոպի և Սահակի ձեռքով գտնուած հայ տառերի 1500 ամեակի և Հայկական տպագրութեան 400 ամեակի յոբելեանական հանդէսներին Էջմիածնում ժողովված Հայ ժողովրդի բոլոր խաւերի, բարեգործական ու կրթական հաստատութիւնների ներկայացուցիչները ջերմ աղօթքներ վերառաքելով ինձ հետ և ամբողջ միաբանութեան հետ միասին նախաթոռ տաճարում Ձերդ Կայսերական Մեծութեան և հանուր Օգոստափառ Տան երկարակեցութեան ու երջանկութեան համար՝ առ ոտս Ձեր Մեծութեանն են արկանում ամենահաւատարիմ հպատակութեան և անսահման սիրոյ ու երախտագիտութեան զգացմունքներ։

Թող Ամենակարող Աստուած երկարէ Ձերդ Մեծութեան օրերը ի փառս քրիստոնէական եկեղեցւոյ և ի բարօրութիւն Մեծ Ռուսաստանի։

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*
* *

Զարը հետեւեալ կերպով բարեհաճեր է պատասխանել Վեհ. Կաթողիկոսին.—

ԼԻՎԱԴԻԱ, 14 Հոկտ.

Նորին Սրբութիւն Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

Շնորհակալ եմ Ձեզ և յանձնարարում եմ հաղորդել Էջմիածնում ասնախմբութեան բոլոր մասնակիցներին իմ շնորհակալութիւնս՝ աղօթքների և ինձ արտայայտված ամենահպատակ զգացմունքների համար։

ՆԻԿՈԼԱՏ